636 Ոսկի փողերն թող գոռան,

1. Ոսկի փողերն թող գոռան,
Թող զարթնուն ազգերն համայն՝
Մեզ ծնաւ Փրկիչ։
Տե՛ս, հոն աստղն հրաշափառ
Ծողայ երկնից ի կամար,
Սէր նշուլէ կենարար,
Մեզ ծնաւ Փրկիչ։

Ալէլուիա՛, գովենք Տէր,
Օրհնաբեր է այս այգ ջինջ,
Ալէլուիա՛, ալէլուիա՛, մեզ ծնաւ Փրկիչ։

2. Արծաթ զանգակներն հնչեն,
Թող արձագանք տան լեռներն՝
Մեզ ծնաւ Փրկիչ։
Վախ, կասկած թող անհետին,
Սրտերն խայտան ցնծագին,
Այս է պարտութիւն մեղքին՝
Մեզ ծնաւ Փրկիչ։

3. Թող երգէ ամէն բերան,
Զի այս է մեծ յոբելեան՝
Մեզ ծնաւ Փրկիչ։
Երգեցէք, զի տիրէ Տէր,
Փրկութեան հոսին գետեր,
Աւագ գործն է աւարտեր,
Մեզ ծնաւ Փրկիչ։